

## Տ. ԱՐՏՎԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՍԻ ԽՈՍՔԸ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹ-ԱՎ

(19 փետրվարի 2001 թ.)

Սիրելի հոգևոր նղբայրներ ի քրիստոս,

Ինձ համար մեծագույն պատիվ է միաբանական մեր հավաքի առաջին օրը ի պաշտոն ողջունել ձեզ համայն հայության հոգևոր օրքան Սրբությոն Սրբոց Էջմիածնում, Մայր Տաճարի հինավոր այս կամարների ներքո: Միաժամանակ գոհություն ևս հայքնում Բարձրյալին, որ մեզ ի մի բերեց հենց Մեծ Պահքի, ինչպես նաև Վարդանանց հերոսամարտի փառավորման նախաշեմին, որպեսզի մեզանից յուրաքանչյուր, օրինակ ունենալով Ասպածորդու փորձություններով լի շրջանը, մեկ անգամ ևս անդրադարձ ունենա հոգևորականի իր առաքելությանը և հագիապես այն պարբականությունների արդյունավորմանը, ինչի համար այսօր այսպես ենք:

Սիրելիք, հայ ժողովրդի հետակոր անցյալից ժառանգած մնայուն արժեքների մեջ մեզ համար իր կրոնական նվիրականությամբ, իր պատմական նշանակությամբ և իր ազգային կարևորությամբ Ասպածադարուշ հասպափություն է Սուրբ Էջմիածնը, որ իրավամբ կոչվել է Սրբություն Սրբոց:

Երկիր մոլորակի վրա չկա որևէ քրիստոնյա ազգին հապուկ մի սրբավայր, որ իր գեղի սրբության ու վաղնջականության արժեքով կարողանա համեմատվել Սուրբ Էջմիածնի հետ: Նայ հանճարի ու հավաքի հրաշակերպն է Մայր Տաճարը և ամեն մի հայ հավաքացյալի հավերժական հաղարփությունն ու փառքը, որպեսից այսօր մեր աղոթքն առաքեցինք առ Երկնավոր Հայրը՝ հայցելով նրա բարեգործությունը:

Այն քրիստոնեության անզնահարելի պարզեն է առաջին քրիստոնյա ժողովը դիմումին, որ է հայությունը: Մենք պարփակոր ենք խորին ակնածանքով մուգենալ հոգևոր ու ազգային այն սրբություններին, այն արժեքներին, այն գանձերին, որոնք հայ ժողովրդի հմացական մեծությունն են հոչակում քաղաքակիրթ մարդկության առջև և որոնք փրկվեցին ժամանակի ավերներից, Հայունիքի ու հայ կյանքի փլուզումներից և պահվեցին Ս. Էջմիածնի լուսաքանդակ կամարների ներքո:

Երկներ ավերող, ժողովորդներ ջարդող, աշխարհը երի ու սրի սարսափների մեջ դողացնող լենկթենուրները, չինգիզխանները, շահարասներն անզամ խնայեցին Ս. Էջմիածնին՝ նահագակ հայ ժողովրդի արցունքներից խղճահարված:

Թանկագին միաբան եղբայրներ, Ս. Էջմիածնը հավաքավոր հայության անզիր Ավելարանն է, ազգին անզիր պատմությունը, բյուրեղյա հավաքի անման խորհրդանիշը, որը մեր հայրերից ավանդվել է մեզ այն պարզ ծշմարփությամբ, թե մեր

առաքելության վեհությամբ ու վարդապետության անաղարությամբ ու խորությամբ միայն կարող ենք լուսավորել հավաքավոր մեր հոգի ճանապարհը: Չափազանցություն մի՛ համարեք և հավաքացնք, որ առանց Ս. Էջմիածնի աշխարհի ոչ մի ժագում հենարավոր չէ պահել կամ ունենալ Առաքելական Եկեղեցի:

Առանց Մայր Աթոռի շնորհազարդ գահակալ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, անկարելի է պահպանել հոգևոր իշխանությունը և ոչ մի ժամանակ: Քրիստոնեությունն ու հայությունը անբաժանելի են, ինչպես անբաժանելի են Քրիստու և Իր Եկեղեցին, Մայր Աթոռը և իր Գահակալը, Հայաստանը և Արարավոր:

Քրիստոնյա հայության համար այսօր չկա այլ մնջություն, այլ վեհություն, այնքան նվիրական այլ սրբություն, քան Մայր Աթոռի Գահակալը, ոմ բարձր նախազահությամբ պիտի ընթանա մեր եռօրյա հավաքը, ոմ ներկայությունը ուժ ու խրախույս պիտի ներշնչի մեզանից յուրաքանչյորին հավաքարապես:

Մեր հավաքի բուն առաքելությանն անցնելուց առաջ, սիրելի հոգևոր եղբայրներ, մեկ անգամ ևս բարի զալուստ եմ մաղթում ձեզ և փոքրիկ անդրադառն կամնենում են իշխեցնել, որ մարդկային կյանքի շնորհանրապես արքահայպվում է խորեղով, խոսքով և գործով: Կյանքի դրսնորման այս երեք ազդակների առնչությունը շար սերը է, փոխապայմանավորվածություն՝ բացահայպ: Խոսքն ու գործը ծնվում են խորեղոցից: Խորեղուրդը մարդկային կյանքի էյությունն է, խոսքով մարդիկ արքահայպում են իրենց խորեղուրդները, գաղափարներն ու զգացմունքները, սակայն մարդկային դրսնորման ամենաազդու և իրական ազդակը գործն է, գեսանելի օրինակը, առանց որի խորեղուրդն ու խոսքը թերի պիտի լինեն: Արդ, եթե այդ երեք ուժերը բարի նպատակի են ուղղվում, ապա մարդկային կյանքը ևս դառնում է բարի:

Քրիստոնյայի կյանքը բարությամբ է առկցուն, երբ իր խորեղուրդները կայծ են սպանում Ասրծոն բարության ջերմոցից: «Դողոս առաջալը Շոռմացիներին ուղղված թղթում ասում է. «Մեր թեպեսի թվով շար, սակայն մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյորս... ունենք գեսակ-լրեսակ պարզներ, ըստ այն շնորհների, որ դրված են մեզ. եթե մարզաքնության շնորհ է ըստ հավաքի չափի, եթե ծառայության՝ թող ծառայի. եթե մենքն ուսուցանում են, թող ուսուցանի, եթե հորդորում են, թող հորդորի...» (ՌՈՒՄ. ԺԲ 5-8):

Մեր ցանկությունն է, որ Ասրծոն կամոք և Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց շնորհազարդ Հայրապետի բարձր նախազահությամբ եռօրյա մեր այս հավաքը լինի արդյունալից և քրիստոնեական ճշմարգությունների ներթափանցումով դառնա կենսական հզոր ազդակ հարկապես մեզանից ենքոր եկեղեցոյ Քում սրբոյ ի մեջ ժողովրդեանս հայկազնեան. ամեն»:

Խոսքս, սիրելի՝ եղբայրներ, ավարտում եմ աղոթքով. «Ո՞վ Տեր երկնի եւ երկրի, աղքարի իմասպութեան, բաշխող շնորհաց, հայցեմք ի Ձեն ի բոլոր սրբի եւ յամենայն մքաց, ցողեա զիմասպութին Քո ի վերայ սպասաւորաց Քոց. զի լիմիցիմք հաւափարիմ պաշտօնեայք Բանին Կենաց եւ անձինք նուիրեալը եկեղեցոյ Քում սրբոյ ի մեջ ժողովրդեանս հայկազնեան. ամեն»: